ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/39

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.02.2022թ. թիվ 26/26-1/1846-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 13.12.2021թ. թիվ 07-01 և 26.01.2022թ. գրությունների հիման վրա, 03.02.2022թ. թիվ 26/26-1/1846-2022 գրությամբ նախաձեռնել է «Ղահրաման» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ղահրաման» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/39 ընթացակարգի շրջանակներում 10.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3.«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.12.2021թ. թիվ 07-01 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը տեղեկացնում է Ձեզ, որ «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» ծածկագրով գնման գործընթացում հետևյալ չափաբաժինների մասով 3, 4, 5, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 27, 28, 29, 32, 33, 34, 35, 37, 38, 40, 41, 42, 46, 48, 49, 56, 62, 64, 69, 70 և 78 հաղթող ճանաչված «Ղահրաման» ՍՊԸ-ն հրաժարվում է պայմանագիր կնքել ներքոհիշյալ չափաբաժինների մասով 3,4, 5, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 20, 22, 23, 27, 28, 29, 32, 33, 34, 35, 37, 38, 40, 41, 42, 46, 48, 49, 56, 62, 64, 69, 70, 78:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը՝ դիմում ենք Ձեզ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն 26.01.2022թ. գրությամբ հայտնել է, որ ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2022թ. թիվ 03/26-1/991-2022 գրության՝ ներկայացնում է պահանջվող տեղեկատվությունը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/39 ընթացակարգի շրջանակներում 10.02.2022թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2022/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2022/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 3, 4, 5, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 27, 28, 29, 32, 33, 34, 35, 37, 38, 40, 41, 42, 46, 48, 49, 56, 62, 64, 69, 70 և 78-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. «Ղահրաման» ՍՊԸ-ն, «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ին ուղղված 12.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ղահրաման» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մամե Հասանյանի հայտնում է, որ «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվում է 3-5, 7-9, 11-14, 16-18, 20, 22-23, 27-29, 32-35, 40-42, 46, 48-49, 56, 62, 64, 69, 70 և 78-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց»:

4. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարության ուղղված 13.12.2021թ. թիվ 07-01 և 26.01.2022թ. գրություններով ներկայացնելով պահանջվող տեղեկատվությունը, խնդրել է, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը, նախաձեռնել «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ գործընթաց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.02.2022թ. թիվ 26/26-1/1846-2022 գրությունը, «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ

կրթահամալիր» ՊՈԱԿ-ի 13.12.2021թ. թիվ 07-01 և 26.01.2022թ. գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց</u>,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ղահրաման» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Ղահրաման» ՍՊԸ-ին 3, 4, 5, 7, 8, 9, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 19, 20, 22, 23, 24, 25, 27, 28, 29, 32, 33, 34, 35, 37, 38, 40, 41, 42,

46, 48, 49, 56, 62, 64, 69, 70 և 78-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

«Ղահրաման» ՍՊԸ-ն, «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ին ուղղված 12.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

<u>««Ղահրաման» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Մամե Հասանյանի հայտնում է, որ «ԼԽՈՒԵ-ԳՀԱՊՁԲ-2022/1» ծածկագրով մրցույթի շրջանակներում հրաժարվում է 3-5, 7-9, 11-14, 16-18, 20, 22-23, 27-29, 32-35, 40-42, 46, 48-49, 56, 62, 64, 69, 70 և 78-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց»:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուսումնասիրելով «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Ղահրաման» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Պատվիրատուին 12.01.2022թ. ուղղված գրությամբ հրաժարվել է 3-5, 7-9, 11-14, 16-18, 20, 22-23, 27-29, 32-35, 40-42, 46, 48-49, 56, 62, 64, 69, 70 և 78-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելուց:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.02.2022թ. թիվ 26/26-1/1846-2022 գրությամբ «Ղահրաման» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ընկերությանն ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**